


# ! ? ԾՐԱԹԵՐԹ DAILY

DAY 4, WEDNESDAY, JULY 15



## Inner Turmoil

Ներքին  
իրարանցում

>> 3  
Նաստասյա  
Կինսկի

>> 4  
«Օձի գրկում»,  
«Դարի  
Նախագիծը»

Հարցազրույց.  
Ռոբ Նիլսոն

>> 5  
Interview  
Rob Nilsson

>> 6  
Project of the  
Century:  
Radioactive  
Cinema

>> 7  
Nastassja  
Kinski: Open  
to Imagination



# 2 | Ծրագիր/program

## հուլիսի 15 july

Մոսկվա կինոթատրոն,  
Կապույտ դահլիճ/  
Moscow Cinema, Blue Hall

10:00



**Քլինչ/The Clinch** Սերգեյ Պուսկեպալիս/Sergei Puskepalis  
*Rus, 90'/FC*  
Lang.: Russian, Subt.: English

12:00



**Օձի գրկում/Embrace of the Serpent** Սիռո Գեռա/Ciro Guerra  
*Col, 122'/FC*  
Lang.: Spanish/Amazonian languages, Subt.: English

14:30



**Արյունակից եղբայրներ/ Blood Brothers** Քես Սխապ/ Kees Schaap  
*Nid, 45'/WE*  
Lang.: Dutch/Turkish/Armenian/English/French/German, Subt.: English and Armenian

15:30

**«Հայեր. հայացք ներսից և դրսից» ծրագիր/«Armenians: Internal and External View» Program**

18:00

**Շուկայի ռեյնը/The Measure of a Man** Ստեֆան Բրիզե/Stephane Brize  
*Fra, 93'/FC*  
Lang.: French, Subt.: English and Armenian

20:00



**Ցյուրիխ/Zurich** Սաչա Պոլակ/Sacha Polak  
*Nid/Bel/Deu, 89'/FC*  
Lang.: Dutch/English/German, Subt.: English and Armenian

22:00



**Ղարի նախագիծը/ The Project of the Century** Կարլոս Մաչադո Կինտելա/Carlos Machado Quintela  
*Arg/Cub/Deu/Che, 100'/FC*  
Lang.: Spanish, Subt.: English and Armenian

Մոսկվա կինոթատրոն,  
Կարմիր դահլիճ/  
Moscow Cinema, Red Hall


10:00

**Մնաս բարով, «Վոլգա»/ Farewell Volga** Համլետ Վարդանյան/Hamlet Vardanyan  
*Arm, 24'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English

**Վերևից/From Above** Ալեն Մանուկյան/Alen Manukyan  
*Arm, 30'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English

**Հատանցում/Traversed** Ալեքս Իգիբաշյան, Էմիլի Մկրտչյան/Alex Igidbashian, Emily Mkrtchian  
*Arm, 26'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English

12:00



**Մեկ, երկու, երեք/One, Two Three** Արման Երիցյան/Arman Yeritsyan  
*Arm/Deu/Nor, 75'/AP, DC*  
Lang.: Armenian/Russian, Subt.: English

14:00

**Մամուլի ասուլիս, հանդիպում Նաստասյա Կինսկիի հետ/ Press Conference, Meeting with Nastassja Kinski**  
*Arm/Deu/Nor, 75'/AP, DC*  
Lang.: Armenian/Russian, Subt.: English

15:30



**Փրկության քարտեզ/Map of Salvation** Արամ Շահբազյան/ Aram Shahbazyan  
*Arm, 94'/WE*  
Lang.: English

17:30



**Մարմին/Body** Մալգոշատա Շումովսկա/Małgorzata Szumowska  
*Pol, 90'/YP*  
Lang.: Polish, Subt.: English and Armenian

19:30



**Կյանքը, ինչպես որ կա/Life as it is** Վլադիմիր Դաշուկ/Vladimir Dashuk  
*Blr, 57'/T*  
Lang.: Russian, Subt.: English and Armenian

21:00

**Մարիայի սիրեցյալները/Maria's Lovers** Անդրեյ Կոնչալովսկի/Andrei Konchalovsky  
*USA, 109'/R*  
Lang.: English, Subt.: Armenian

Մոսկվա կինոթատրոն,  
Փոքր դահլիճ 1/ Moscow Cinema, Small Hall 1

10:00



**Ըսպես/Espes** Տանիտ Ֆեռնանդես, Իսաակ Ռոդրիգես/Tanit Fernandez, Isaac Rodriguez  
*Spa, 12'/DC*  
Lang.: Catalan, Subt.: English

**Հավալունը անապատում/ Pelican in the Desert** Վիեստուր Վայրիշտ/ Viestur Kairish  
*Lva, 68'/DC*  
Lang.: Latvian/Russian, Subt.: English

12:00



**Սիվաս/Sivas** Քասն Մյուսթեջի/Kaan Mujdeci  
*Tur/Deu, 97'/DAB*  
Lang.: Turkish, Subt.: English

14:00

**Արարատ/Ararat** Ատոմ Էգոյան/Atom Egoyan  
*Can/Dra, 115'/WE*  
Lang.: English/Armenian/French/German/ Turkish, Subt.: English and Armenian

16:00



**Ձկան պոչ/Fish Tail** ժուակին Պինտու, Նունու Լեոնել/Joaquim Pinto, Nuno Leonel  
*Prt, 104'/DC*  
Lang.: Portuguese, Subt.: English and Armenian

18:00

**Գրոզնի Բլուզ/Grozny Blues** Նիկոլա Բելլուցի/Nicola Bellucci  
*Che, 142'/DC*  
Lang.: Russian/Chechen, Subt.: English and Armenian

20:00

**Խավարում/Eclipse** Արա Երնջակյան/ Ara Yernjakyan  
*Arm, 12'/WE*  
Lang.: Armenian, Subt.: English

**Ուրիշ հայրենիք. Մարիա Յակոբսենի օրագրությունը/ Other Homeland: Diaries of Maria Jacobssen** Վրեշ Պետրոսյան/Vrezh Petrosyan  
*Arm, 50'/WE*  
Lang.: Armenian, Subt.: English

21:30

**Ճշգրտները/Screamers** Կարլա Կարապետյան/Carla Garapedian  
*UK, 91'/NA*  
Lang.: English, Subt.: Armenian

Մոսկվա կինոթատրոն,  
Փոքր դահլիճ 2/ Moscow Cinema, Small Hall 2

10:00, 18:00

**Դինոզավր/Dinosaur** Մարգո Ջուբաշվիլի/Margo Zubashvili  
*Geo, 15'/SC*  
Lang.: Georgian, Subt.: English

**Ամեն ինչ լավ կլինի/ Everything Will be Ok** Պատրիկ Ֆոլրաթ/Patrick Vollrath  
*Deu/Aut, 30'/SC*  
Lang.: German, Subt.: English

**Հիտլերն օպերայում/Hitler in the Opera** Միխալ Գրիբովսկի/ Michał Grzybowski  
*Pol, 27'/SC*  
Lang.: Polish/English, Subt.: English

12:00, 20:00



**Թե ինչու վերացան դինոզավրերը/Why the Dinosaurs Disappeared** Միխայ Գիցդ/Mihai Ghită  
*Rom, 16'/SC*  
Lang.: Romanian, Subt.: English

**Ձմեռնաշունչ գարուն/ Wintry Spring** Մոհամեդ Քամել/Mohamed Kamel  
*Egy, 16'/SC*  
Lang.: Arabic, Subt.: English

**Ֆերդինանդ Քնապ/ Ferdinand Knapp** Անդրեա Բալդինի/Andrea Baldini  
*Fra, 15'/SC*  
Lang.: French, Subt.: English

**Պատիժ/Discipline** Քրիստոֆ Մ. Սաբեր/Christophe M. Saber  
*Che, 11'/SC*  
Lang.: French/German/Arabic/Italian/ Spanish, Subt.: English

Սինեմա սթար/  
Cinema Star

19:00

**Կամուրջ դեպի սահման/A Bridge to a Border** Ռոբ Նիլսոն/Rob Nilsson  
*USA, 90'/YP*  
Lang.: English, Subt.: Armenian

21:00

**Աղախնի օրագիրը/Diary of a Chambermaid** Բենուա ժակո/ Benoit Jacquot  
*Fra/Bel, 95'/FNC*  
Lang.: French, Subt.: English and Armenian

Հայաստան կինոթատրոն,  
Փոքր դահլիճ/ Hayastan Cinema, Small Hall

17:00



**Ընտանեկան ալբոմ/ Family Album** Հովհաննես Իշխանյան/Hovhannes Ishkhanyan  
*Arm, 35'/AP*  
Lang.: Armenian/Russian, Subt.: English

**Նարնջագույն բաճկոնով մարդը/The Man in the Orange Jacket** Հայկ Կարապետյան/Aik Karapetian  
*Lva/Est, 71'/AP*  
Lang.: Latvian/Russian, Subt.: English and Armenian

19:00



**Սանդվիչ կղզու մարդը/The Sandwich Island Man** Լևոն Մինասյան/Levon Minasian  
*Fra, 26'/AP*  
Lang.: French, Subt.: English and Armenian



**Հովիտ երգը/Shepherd's Song** Վահրամ Մխիթարյան / Vahram Mkhitaryan  
*Pol, 30'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English



**Վերևից/From Above** Ալեն Մանուկյան/Alen Manukyan  
*Arm, 30'/AP*  
Lang.: Armenian, Subt.: English

21:00

**Մեկ, երկու, երեք/One, Two Three** Արման Երիցյան/Arman Yeritsyan  
*Arm/Deu/Nor, 75'/ AP, DC*  
Lang.: Armenian/Russian, Subt.: English

Հայաստան կինոթատրոն,  
Մեծ դահլիճ/  
Hayastan Cinema, Big Hall

17:00



**Լռության 40 օր/40 Days of Silence** Սադոտա Իսմայլովա/Saodat Ismailova  
*Uzb/ Tjk/Nld/Fra/Deu, 88'/ DAB*  
Lang.: Tajik, Subt.: English and Armenian

19:00



**Դաժանը/Cruel** Էրիկ Շերիեր/ Eric Cheriére  
*Fra, 108'/FNC*  
Lang.: French, Subt.: English and Armenian

21:00



**Մենք երիտասարդ ենք, մենք՝ ուժեղ/We are Young, We are Strong** Բուրհան Բուրբանի/Burhan Qurbani  
*Deu, 128'/GNC*  
Lang.: German, Subt.: English and Armenian

21:00



**Artmenians/Artmenians** Ռիկարդո Էշպիրիտո Սանտո/Ricardo Espírito Santo  
*Prt, 108'/WE*  
Lang.: Armenian/English/ German/French, Subt.: English and Armenian

## GOLDEN APRICOT DAILY

**Խմբագիրներ՝** Յոսթ Բրոերեն, Արթուր Վարդիկյան  
**Աշխատակազմ՝** Մարիսկա Գրեյվլենդ, Մարիկե Նյուդորփ  
**Տեղիեցակներ՝** Դիանա Կարդումյան,  
**Լուսանկարիչ՝** Մանե Հովհաննիսյան  
**Սրբագրիչներ՝** Մարինե Ղարախանյան, Ռինա Աղեկյան  
**Թարգմանիչներ՝** Լուսինե Հովհաննիսյան, Ջարուհի Մաֆարյան  
**Գիզայներ՝** Գայանե Գրիգորյան  
**Գլխավոր խորհրդատու՝** Պիտեր վան Բյուերեն  
**Տպագրված է** «ՆՏ Հոլդինգ» ՍՊԸ-ում

**Editors:** Joost Broeren & Artur Vardikyan  
**Staff:** Mariska Graveland, Maricke Nieuwdorp  
**Contributors:** Kees Driessen, Karen Avetisyan, Diana Kardumyan  
**Photographer:** Mane Hovhannissyan  
**Design:** Gayane Grigoryan  
**General Coaching Adviser:** Peter van Bueren  
**Printer:** "NT Holding" Ltd.



# Բաց է երևակայության համար...

**Այս տարվա փառատոնի պատվավոր հյուրերից է դերասանուհի Նաստասյա Կինսկին (Բեռլին, 1961 թ.): Այսօր պաշտոնապես կբացվի նրա հետահայաց ծրագիրը, որի մեջ ներառված է 3 կինոնկար՝ Կինսկիի ազնվորդ ֆիլմոգրաֆիայից:**

Կինսկին որոշիչ դերակատարում ունի հրաշալի մի կինոտեսարանում, որը մխրճվել է որջ աշխարհի կինոտեսարանների հիշողության մեջ: Խոսքը Վիմ Վենդերսի «Ոսկե արմավենու» արժանացած «Փարիզ, Թեքսաս» ֆիլմի մասին է: Այստեղ Կինսկին մեծ տպավորություն է թողնում որպես մի կին, ով կորել էր, իսկ հետո՝ հայտնվել խցիկում: Սկզբում նա չգիտի, թե ով է խոսում իր հետ հայտնու մյուս կողմից, բայց աստիճանաբար սկսում է հասկանալ, որ ամուսինն է՝ Թրեյսը: Տեսախցիկը որսում է նրա աննկատ արձագանքներն ու զգացմունքները, երբ Թրեյսը ապակու հետևից սկսում է պատմել իրենց համատեղ հիշողություններից: Ճիշտ է՝ իրենց բաժանում է ապակին, բայց զգացվում է, թե ինչ հզոր կապ կա նրանց միջև: Կինսկին միշտ գայթակղիչ է մի քիչ էլ սառը, օժտված է իր դերն զգալու այն հազվագյուտ կարողությամբ, որ նրա յուրաքանչյուր դերակատարումը գրգռում է երևակայությունը՝ մեկնաբանությունների համար թողնելով մեծ տարածք:

Կինսկին համաշխարհային հոշակ ձեռք բերեց, երբ Ռոման Պոլանսկու «Թեա» (1979) ֆիլմում կատարեց գլխավոր դեր. ինչի համար արժանացավ «Ոսկե գլոբուս» մրցանակի: Սա թոմաս



«Փարիզ, Թեքսաս»

Տարդիի գրքի էկրանավորումն է, որը երկե ցուցադրվեց «Ոսկե Ժիբանի» շրջանակներում: Պոլանսկին Կինսկին մեկ տարի ժամանակ էր տվել՝ դերին պատրաստվելու համար: Գերասանուհին այդ մեկ տարին ապրում էր բրիտանական ազգայնական, որպեսզի ազատվի իր գերմանական առողջանությունից: Հարցազրույցներում Կինսկին ասում է, որ Պոլանսկին փրկել է իրեն քառտիկ մանկությունից՝ խիզախություն տալով ինք-

նությունը ընտրելու կյանքի ուղին: Գուցե պատահականություն է, բայց Կինսկիի ֆիլմերից շատերը պատկազերծում են ընտանիքի առասպելը. «Թեա»-ում՝ իրեն լքում են, «Փարիզ, Թեքսասում»՝ նույնպես, իսկ «Ամերիկյան ռապսոդիայում»՝ նա ինքն է լքում իր ընտանիքը:

Իր փայլուն կարիերայի ընթացքում Կինսկին աշխատել է աշխարհափոշակ ռեժիսորներ՝ Ֆրենսիս Ֆորդ Կոպոլայի, Գևիլի Լինչի և Մայքլ

Վինսթեյնի հետ, և հիմա էլ մեծ հաջողություն ունի: Այս աշխարհը նրա դեմքը կգարդարի Վենետիկի կինոփառատոնի պատահաբ: Որպես դերասանուհի՝ նրա աշխատանքը միշտ բաց է մեկնաբանությունների և երևակայության համար: Գուցե դրա պատճառներից մեկն էլ Ռիչարդ Ավերոնի՝ 80-ականներին արված հայտնի լուսանկարն է, որում Կինսկիի մերկ մարմնին մի պիթոն է փաթաթվում: Այս նկարը փակցված էր այդ սերնդի դեռահասներից շատերի պատերին:

Նմանապես «Մարիայի սիրեցյալները» (Անդրեյ Կոնչալովսկի, 1985թ.) ֆիլմի հերոսներից մեկը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում վիրավորված վետերանը, այնքան երկար էր երագել իր մանկության սիրելիին (Կինսկիի կատարմամբ), որ այնու ունակ չէր տեսնել իրական կոնջը՝ իր երևակայությունից դուրս: Այս ֆիլմը հազվադեպ հնարավորություն է ընձեռում՝ տեսնել Կինսկիին նորմալ ու համեմատաբար համեստ կնոջ դերում: Չնայած այստեղ էլ շքեղ է ինչպես՝ միշտ: **ՄԳ**

**«Փարիզ, Թեքսաս», ռեժ.՝ Վիմ Վենդերս, Գերմանիա/Ֆրանսիա (Յետահայաց ցուցադրություն), «Սինեմա Սթար», 16.07 (21:00), «Մուսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ, 19.07 (20:30)**

**«Մարիայի սիրեցյալները», ռեժ.՝ Անդրեյ Կոնչալովսկի, ԱՄՆ (Յետահայաց ցուցադրություն), «Մուսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ 15.07 (21:00), 19.07 (16:00)**

## Կինոողլասֆորմի երկու հարթոցները

Հայաստան-Թուրքիա կինոպատմության փակման արարողության ժամանակ միանգամից երկու հարթոց հայտարարվեց: Թուրք ռեժիսոր Մենեմ Գուլչեի «ՔաՆ» և այլ համահեղինակ ռեժիսորներ Մարինե Բեյալթյանի ու Սոնա Բեյալթյանի «Մուրատ» կարճամետրաժ ֆիլմերի նախագծերը: Այս երկու նախագծերը կկեսնեն 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք պարգևը: Սակայն ժյուրիի անդամ, «Երկիր Մեղիս» հեռուստատեսության նորությունների և քաղաքական հարթո-

ցի մեծերի ղեկավար Գեղամ Մանուկյանն ավելացրեց, որ իր ընկերությունը կաջակցի հարթոցներին՝ հետադարձաբար գործընթացում: Երկու նախագծերն էլ նպատակ ունեն լուսարձակել երկու երկրների միջև առկա լարված հարաբերությունները: «ՔաՆ» կարճ պարային ֆիլմ է, որտեղ երկու կին պարուհիների տեղաշարժումն Անի քաղաքով մեկ կարտագոյի Հայաստանի և Թուրքիայի միջև եղած տարածաբանությունները, բայց և՛ ընդհանրությունները: «Մուրատ» կարճամետ-

րաժ վավերագրությունը կհետևի համաճում մի մարդու, ով ունի հայկական արմատներ, ապրում է Ստամբուլում և թուրքական անուն է կրում: Ռեժիսորները պլանավորում են վավերագրել նրա առաջին այցը Հայաստան և ներկայացնել ինքնությունն որոնման իր ներքին պայքարը:

2008 թվականից սկսած պատմությունը միավորում է Հայաստանի և Թուրքիայի կինոգործիչներին: Մասնագիտական դասընթացներից, հանդիպումներից և նախագծերի ներկայացումներից բաղկացած երկօրյա աշխատաժողովի համար ընտրվել էր տարբ նախագիծ: Մինչ օրս՝ ՀԹԿԳ-ի սջակցությանը արտադրվել է 17 կինոնկար, իսկ կրկնակի մրցանակի շնորհիվ՝ «ՔաՆ»-ը ու «Մուրատը» հնարավոր է շուտով համալրեն այդ ցուցակը: **ՅԲ**

## Լեռնական կինո



Հուլիսի 15-ը «Ոսկե Ժիբանի» համար լեռնական կինոյի օր է, ուստի բոլորին հրավիրում ենք դիտելու ռեժիսոր Մալգոժատա Շամոնովսկայի «Մարմին» ֆիլմը: Այն կցուցադրվի «Մուսկվա» կ/թ Կարմիր դահլիճի էկրանին 17:30: Ֆիլմն այս տարի Բեռլինի միջազգային կինոփառատոնում արժանացել է «Արծաթե արջ» մրցանակի՝ լավագույն ռեժիսորական աշխատանքի համար:

## Զրույց

Հուլիսի 15-ին 17:30, Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում տեղի կունենա հանդիպում հեղուկի ռեժիսոր, սցենարիստ, դերասանուհի Բիջայա Ջենայի հետ:

## Հարգանքի տուրք

19:30, «Մուսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ: Հարգանքի տուրք կտրվի բելառուս ռեժիսոր Վադիմիր Դաշուկին, ով կյանքից հեռացավ անցած տարվա հուլիսին՝ 52 տարեկանում: Նա հայտնի վավերագրող Վիկտոր Դաշուկի որդին էր, 1987-ից ֆիլմեր էր նկարահանում, նաև լրագրող էր: Նրա վերջին ավարտուն ֆիլմը՝ «Կյանքը, ինչպես որ կա», Միենկի շրջանի շներին ամենահայտնի մասնագետ Դեմյան Խոդատովիչի վավերագրական դիմանկարն է: Ֆիլմի ցուցադրությանը ներկա կլինի Խալիմա Խասանովան Դաշուկի այրին:

## Կեսգիշերային քննարկում

Օրվա փառատոնային տպավորություններով կհավելու, դիտած ֆիլմերի մասին խոսելու համար կեսգիշերից հետո հրավիրում ենք թումանյան 40՝ The Club:

## Հայոց կարճերը

12-րդ «Ոսկե Ժիբանի» «Հայկական համայնապատկեր» մրցույթի մեջ ընդգրկված են 7 կարճամետրաժ կինոնկարներ: Ինչպես միշտ՝ ֆիլմերի աշխարհագրությունը բազմազան է:

«Բժիշկը» ռուսաստանարևել Աննա Գորոյանի դիպլոմային աշխատանքն է: Աննան ստացել է երկու բարձրագույն կրթություն՝ ֆիզիկամաթեմատիկական և լեզվաբանական, ապա միայն ընդունվել ՎԳԻԿ: Գործողությունները ծավալվում են առաջին չեչենական պատերազմի ժամանակ՝ չնայած ֆիլմը նկարահանվել է Հայաստանում: Խաղող բնակիչները լքում են քաղաքը, իսկ ռուս բժշկին հանգամանքներն ստիպում են մնալ լքված քաղաքում և կատարել իր մասնագիտական պարտքը:

«Մնա բարով, «Վուզա» ֆիլմը նկարել է Համլետ Վարդանյանը: Ֆիլմում ներկայացված է ուսուցիական մի գյուղակ, որտեղ երիտասարդները ձանձրություն են փայտում են, դաշտերում օղի են խմում, իսկ «Վուզան» պաշտպանում է իրենց անձրևից, ձյունից, քամուց... բայց չի փրկում տաղտուկից ու դատարկության զգացումից: Մասնագիտական կրթություն չունեցող ռեժիսորը պատմում է. «Օպերատոր ընկերոջս առաջարկեցի միասին ֆիլմ նկարել, բախտս բերեց՝ համաձայնեց: Գերասաններն էլ մեր գյուղի տղերքն էին: Հարցնում էին ինչ անենք, ասում էի՝ վագեր էս կողմից էն կողմ, կամերան էլ էս կետում կղեն, կնկարեն»:

Մեզար Կանանյանն ու Ալեշանդրե Մուրան ներկայացնում են «Հնչյունների ֆիլմ» կարճամետրաժը: Կանանյանը տասից ավելի կարճամետրաժ է մեկ լիամետրաժ ֆիլմեր է նկարահանել Բրազիլիայում, Իսպանիայում, Հայաստանում: Մասնակցել է միջազգային կինոփառատոների: Պլաստիկական և ձայնային կոմպոզիցիան



«Սանդվիչ կղզու մարդը»

հրավիրում են խորատուվելու հիպոտիկ փորձի մեջ: Ֆիլմ, որի հնչյունները պետք է տեսնել, իսկ պատկերները՝ լսել:

Սուրեն Բաբայանի արվեստանոցն ավարտած Ալեն Մանուկյանը հանդես է գալիս «Վերևից» ֆիլմով: Սա նրա երկրորդ աշխատանքն է: Ֆիլմը հազեցած է սիմվոլիկայով, հետաքրքիր նկարչական և դերասանական աշխատանքով և իր մեջ կրում է Սուրեն Բաբայանի ոճի հետքերը:

Բուլղարիան ներկայանում է Գուրգ Ալանյանի՝ «Ինչպես գիրանալ առողջ եղանակով» ֆանտաստիկական ֆիլմով: Ալանյանն իր կարիերան սկսել է որպես մոնտաժող, ապա կրթություն է ստացել նախ՝ Սոֆիայի թատրոնի և գեղարվեստի ազգային ակադեմիայում, իսկ հետո՝ Լոնդոնի կինոակադեմիայում: Ալանյանի հերոսներն ապրում են մի աշխարհում, որտեղ պակասում է ձգողական ուժը: Իրենք տարբեր միջոցների են դիմում՝ դիմադրելու ձգողականության պակասին, որին դիմակայում է միայն իսկական սերը:

Գերասան Գագիկ Մարդանը ավարտել է Ռոման Բաբայանի բարձրագույն ռեժիսուրայի կուր-

սերը: «Ճանապարհը» նրա առաջին աշխատանքն է: Հուսահատ կնոջ և անօթևան մարդու անսպասելի հանդիպումը փրկում է կնոջ կյանքը, ով պատրաստվում էր նետվել կամրջից: Ֆիլմը գրավում է իր անմիջականությամբ, դրամատիկ պատմությունը ներկայացված է թեթև առանց ավելորդ ողբերգական խտացումների:

Ֆրանսաբնակ Լևոն Մինասյանը ներկայացնում է «Սանդվիչ կղզու մարդը»: Ֆիլմն ընդգրկված է միանգամից երկու ծրագրերում՝ «Հայկական համայնապատկեր» և «Կորիզ»: Միևնայանն ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը, աշխատել է որպես դերասան, իսկ կինոկրթություն ստացել է Փարիզի 8-րդ համալսարանում: «Սանդվիչ կղզու մարդը» ֆիլմի հերոս, մանկահասակ Լևոն դպրոցում առաջադրանք է ստանում նկարագրել հորը, ում երբեք չի տեսել: Նա պարզում է, որ հայրը Սանդվիչ կղզու է ապրում և երկար ու վտանգավոր ճամփորդություն է ձեռնարկում՝ նրան գտնելու: Լիոյի մորը մարմնավորում է հայտնի դերասանուհի Աննա Մուզայիսը: **ԳԿ**



## 4 | գրախոսություններ

# Հանելուկային թափառականը

«Ցյուրիխ», ռեժ.՝ Սաշա Պոլաք, Նիդերլանդներ/Գերմանիա/Բելգիա (Խաղարկային ֆիլմերի մրցույթ), «Մոսկվա» կ/թ, Կապույտ դահլիճ, 15.07 (20:00)

Ներքին արեւմտյան մասին պատմող միանգամայն բարդ այս պատմության սցենարը գրել է Հելենա վան դեր Մյոլենը՝ որպես հերոսի նախատիպ ունենալով հոլանդացի նշանավոր երգիչ Վենդել Սենդերսին: Սենդերսն այստեղ իր կինոդերքուստն է արել՝ հանելուկային թափառական Նինայի դերակատարմամբ: Անցյալը մոռանալու անհույս ճիգով՝ նա թափառում է Եվրոպայի մայրուղիներով: Երբ գերմանացի մի վարորդի է հան-

դիպում, սիրավեպ է սկսում՝ ճամփորդելով բեռնատարի վարորդի հետ: Բայց իր իրական դրդապատճառները Նինան ոչ որի առաջ չի բացում:

Միայն ժամանակի ընթացքում է պարզ դառնում, որ Նինայի համար շարժառիթ է եղել ստորագույն դավաճանության ցավը: Իսկ երբ նրա սիրեցյալ վարորդ Բորիսն ավտովթարից զոհվում է՝ Նինան բացահայտում է, որ նա երկա-կի կյանք է վարել՝ արդեն իսկ ամուսնացած ու ընտանիքի տեր լինելով: Հանկարծակի կորուստն ու նորահայտ կեղծիքը Նինային լիովին հանում են հավասարակշռությունից:

Իր տխրությունից կտրված՝ նա փախչում է և ի վերջո, հայտնվում տեղից տեղ շրջող վարորդների շրջապատում:

Իր հզոր ու համոզիչ խաղի շնորհիվ Սենդերսը վշտի խորագույն շերտեր է բացահայտում: Նա նաև մի քանի հրաշալի կատարում ունի ֆիլմում, քանի որ երաժշտությունը Սենդերսի կյանքի մի մասն է՝ թե՛ էկրանին, թե՛ էկրանից դուրս:

Հոլանդացի երիտասարդ տաղանդալու Սաշա Պոլաքի վերջին աշխատանքն այս տարվա Բեռլինի կինոփառատոնում արժանացել է Կինոարվեստի միջազգային կոնֆեդերացիայի մրցանակին: Ֆիլմն աչքի է ընկնում նաև գերազանց օպերատորական աշխատանքով՝ ներառյալ կենդանի ընձառյուծի հետ «սյուրռեալիստական» այն տեսարանը, որում Նինայի սրողված ապրումներն ի ցույց են դրվում՝ միմիայն նրա դեմքը կինոխցիկով որսալով: **ՄԳ**

## Ճամփորդության տեսիլ

«Օձի գրկում», ռեժ.՝ Սիռո Գեռա, Կոլումբիա (Խաղարկային ֆիլմերի մրցույթ), «Մոսկվա» կ/թ, Կապույտ դահլիճ, 14.07 (22:00), 15.07 (12:00)

Այս կոլումբիական սև-սպիտակ դրաման հիշատակի հզոր տուրք է արդեն անհետացած ամազոնյան հին ու բազմազան մշակույթների: Կայսերապաշտ արևմտաբնակների ժամանումը վերջ տվեց տեղաբնակների բնական ու հոգևոր կենսակերպին: Բայց այս պատմական ու արկածային ֆիլմն ուղղակի զանգատ ու հառաչանք չէ. այն նաև միմյանց ճանաչելու և կյանքի ընկերներ ձեռք բերելու մասին է:

Մոտավորապես 1900 թ. էր, երբ երիտասարդ ամազոնցի շաման Կարամակատեն հանդիպում է մի սպիտակամորթի: Դա մի հիվանդ գերմանացի զինվորական էր, ում հազվագյուտ դեղատույս էր պետք՝ ապաքինվելու համար: Բայց ինչն պետք է նա օգնի այդ օտարերկրացուն: Չէ՞ որ նրանք ստրկացրել էին ամազոնցիներին, ստիպել տեղաբնակներին՝ հրաժարվել տեղական աստվածներից ու քրիստոնեություն ընդունել, անհարգալից էին վերաբերվել նրանց ծիսակարգերին ու բնությանը: Այդուհանդերձ՝ Կարամակատեն որոշում է օգնել նրան՝ գտնել այդ բույսը: Նրանք նավակով մեկնում են գետային ճամփորդության, որի ընթացքում բազմաթիվ առեղծվածային արկածների են հանդիպում: Տասնամյակներ անց մեկ այլ սպիտակամորթ է գալիս՝ գտնելու Կարամակատենին, որպեսզի սովորի նրա նախնիների գիտելիքները և գտնի այդ նույն բույսը: Նրանք անցնում են նույն ճանապարհով, բայց տեսնում են արդեն ամբողջովին փոխված աշխարհ, որտեղ արևմտյան ազդեցությունը ջնջել է ամազոնյան յուրահատուկ կենսակերպն ու միջավայրը:

Կոլումբիացի ռեժիսոր Սիռո Գեռան ոգեշնչվել էր երկու հետազոտողների՝ գերմանացի ազգագրագետ Թեոդոր Քոչ-Գրունբերգի (1872-1924) և ամերիկացի կենսաբան Ռիչարդ Էվանս Շուլթսի (1915-2001) աշխատություններից: Միանույնիվել այդ երկու հետազոտություններում նկարագրված աշխարհները՝ ռեժիսորը կարողացել է ստեղծել տպավորիչ մի կինոնկար՝ կայսերապաշտության, ֆոլկլորի, խորհրդանիշների ու ճամփորդությունների մասին: Նույնիսկ սև-սպիտակ գույները չ են խանգարում զգալ ջունգլիների խտությունն ու գեղեցկությունը, իսկ բնության ձայներն ուժեղացնող հզոր հնչյունային էֆեկտները և ազգային երաժշտությունը կինոնկարն էլ ավելի տպավորիչ են դարձնում: **ՄԵ**



## Ռադիոակտիվ կինո

«Դարի նախագիծը», ռեժ.՝ Կարլոս Մ. Կինտեյա, Արգենտինա/Կուբա/Գերմանիա/Շվեյցարիա (Խաղարկային ֆիլմերի մրցույթ), «Մոսկվա» կ/թ, Կապույտ դահլիճ, 15.07 (22:00), 16.07 (12:00)

Երեք տղամարդ ու մի ոսկե ձկնիկ միասին ապրում են փոքրիկ բնակարանում՝ երեք սերունդներ՝ հայրը, որդին ու պապը: Նրանց բնակարանը գտնվում է Կուբայի փոքրիկ քաղաք Խուրագուայի բարձրահարկ շենքերից մեկի վերջին հարկում: Այդ քաղաքն անվանում են նաև էլեկտրամիջուկային քաղաք, քանի որ այստեղ պետք է իրականացվեր «դարի նախագիծը», որից էլ հենց ֆիլմն ստացել է իր վերնագիրը: Դարի նախագիծ ասվածը մի անավարտ ատոմակայան է:

1976 թ.Կուբան ու Խորհրդային Միությունն ստորագրել էին պայմանագիր՝ Խուրագուայի ատոմակայանը երկու ատոմային ռեակտորներ կառուցելու վերաբերյալ: Այդ ատոմակայանները պետք է նվազեցնեին Կուբայի կախումը ներկրվող

նավթից: Առաջին ռեակտորի շինարարությունն սկսվեց 1983 թ., շինանյութերի, ինչպես նաև մասնագետների մեծ մասը գալիս էր Ռուսաստանից: Բայց Խորհրդային Միության փլուզումից հետո հոսքը դադարեց, և շինարարությունը կանգ առավ 90-ականների կեսերին:

Այս ժանգոտող շինություններն ասես խորհրդանշում են ժամանակակից Կուբան, որը հիմա գտնվում է լճացման մեջ, և անցյալի լավատեսությունը, որն այժմ հոգս է ցնդել: Այս բնակարանում ապրող երեք տղամարդիկ նույնպես շատ քիչ ակնկալիքներ ունեն իրենց ապագայից: Հորը՝ Ռաֆայելին, լքել է կինը, և նա հիմա ստիպված ապրում է իր ութսունամյա դուրսագրգիռ հոր՝ Օտտոյի հետ: Ֆիլմի սկզբում նրանց միանում է Ռաֆայելի 23-ամյա որդին՝ Լեոն, ով նույնպես վերջերս է ամուսնալուծվել: Շատ շուտով այս երեք տղամարդիկ հասցնում են զզվել իրարից, և նույնիսկ Լեոնի նոր ընկերուհու զարուստը չի օգնում նրանց՝ հարաբերությունները հարթել: Ահա սա է ֆիլմի հակիրճ բովանդակությունը. «Դարի նախագիծ» ավելի շատ ուշադրություն է դարձնում ներկայացման այլաբանական ոճին: Այս բնակարանում ապրող յուրաքանչյուր տղամարդ ասես ներկայացնում է Կուբայի ժամանակակից պատմության երեք սերունդներից մեկը:

Երիտասարդ կուբացի ռեժիսոր Կինտեյան մեզ է ներկայացնում նաև քաղաքի պատմությունը՝ այն արխիվային կադրերով ու նորությունների թողարկումներով, որոնցից շատերը նկարահանված էին էլեկտրամիջուկային քաղաքի հեռուստատեսության կողմից (հետևաբար ավելի շատ քարոզչություն են, քան իրական նորությունների թողարկումներ): Փոքրիկ պայթյունների նման այս կադրերն անցնում են ժամանակակից պատմության միջով, որը նկարահանված է բաց՝ սև-սպիտակ կադրերով: Այդ համադրության շնորհիվ ֆիլմն ասես ռադիոակտիվ է դառնում:

Երբ Ռոտերդամի կինոփառատոնում ֆիլմն արժանացավ «Ոսկե վագր» մրցանակի, Կինտեյան իր խոսքում ասաց, որ թերևս միակ գույնը, որը նա կուզեր օգտագործել իր ֆիլմում՝ կանաչն է: «Բնությունը դանդաղորեն հետ է նվաճում այս արդյունաբերական տարածքը, և լավ կլինեք, եթե ես կարողանայի գունային համադրումով ավելի հստակ ցույց տալ այդ գործընթացը»: **ՅՔ**

## Դարանակալ բարբարոսություն

«Ադախնի օրագիրը», ռեժ.՝ Բենուա ժակո, Ֆրանսիա/Բելգիա («Ֆրանսիական Նոր կինո» ծրագիր), «Սինեմա Սթար» 15.07 (21:00), «Մոսկվա» կ/թ Կապույտ դահլիճ, 16.07 (22:00)

Բարդ է պատվերներ տալ չափազանց գրավիչ սպասուհի Սելեստինին՝ Բենուա ժակոյի «Ադախնի օրագիրը» ֆիլմի գլխավոր հերոսուհուն. ֆիլմ, որն ընդգրկված է «Ֆրանսիական նոր կինո» ծրագրում: 1964-ին՝ Լուիս Բունյուելի դասական էկրանավորման մեջ փայլում էր ժամանա Մորոն: Ժակոյի նկարահանած տարբերակում նա ադախնի ողբերգական վերջաբան է ունենում՝ ի հակառակ իր սպասումներին:

Տասնիններորդ դարի վերջին փարիզուհի Սելեստինը (Լեա Սելյո) ժամանում է դժգույն մի գյուղաքաղաք՝ քմահաճ մի տիկնոջ մոտ ծառայելու: Սելեստինն իր զգացումները պահպանում



է ամենայն զգուշությամբ և խուսանավելով «լող տալիս» աշխատավոր դասակարգի ու բուրժուազիայի միջև: Նա շարունակաբար տեղաշարժ-

վում է համարից համար ու ամեն ինչ սեփական աչքով տեսնում՝ առանց բանալու անցքից ծիկրակելու: Ֆրիգիդ տիրուհին Սելեստինին անվա-


նում է անկայուն ու անհուսալի, մինչդեռ սեռական կաշունդություն ունեցող նրա ամուսինը Սելեստինի հետ պարտեզում սիրախաղ է սկսում: Հենց առիթ լինի՝ Սելեստինը կօգտագործի թուրակամ ու ցանկասեր այդ մարդուն, և երկար չի տևի, մինչև որ նա իրենից կթորափի դիտորդի դերը:

Զգուշորեն կառուցված ֆիլմը հետաքրքիր ու մթին շարունակություն է ստանում, երբ անտառում հայտնաբերվում է մեռած փոքրիկ աղջկա դի: Սելեստինը կասկածում է իր սիրեցյալ պարտիզան Ջոզեֆին, քանի որ հենց նա է սպանության օրն անտառի միջով վարելիս եղել: Այդտեղ՝ տան մոտակա սև թփերի արանքում բարբարոսությունն է դարանակալում... Մի քայլ միայն և՛ քաղաքակրթությունն այլևս չկա: Ջոզեֆը Սելեստինին իր ազդեցության ներքո է պահում և սպասուհին, ով նրան հետևում է ամեն ինչում, պատրաստ է նաև նրա հանցակիցը դառնալ: Պարզվում է, որ նախկին աղախին իսկապես հաճույք է զգում, երբ մարդկանց վերաբերվում է նույնքան վատ, որքան իրեն էն վերաբերվել. դերերը վերջապես փոխվում են: **ՄԳ**



# Rob Nilsson

**Ամերիկացի ռեժիսոր Ռոբ Նիլսոնի «Կամուրջ դեպի սահման» ֆիլմը կունենա իր երևանյան պրեմիերան: Սա այն ֆիլմերից է, որոնք նա ստեղծել է իր Direct Action Cinema մոտեցումով: Նիլսոնը կինոյում իր առաջին քայլերն արել է Նիգերիայում, և որտեղ Վիետնամական պատերազմի ժամանակ աշխատում էր ԱՄՆ խաղաղության կորպուսի համար, որտեղ նա 8մմ-ով նկարահանել է «Դասը» (1965)՝ նեոկոլոնիալիզմի ծաղրերգությունը: Բայց նրա կարիերան սկսվել է «Հյուսիսային լույսերով», որը 1978 թ. Կաննում շահեց «Ոսկե խցիկ»՝ որպես լավագույն դեբյուտային ֆիլմ: Հետագա տասնամյակներին նա նկարահանել է 48 կարճամետրաժ և լիամետրաժ ֆիլմեր, և ինչպես 75-ամյա ռեժիսորն է ասում՝ դեռ նորերն էլ կլինեն:**



**Երբ է ծնվել կինոյի հանդեպ ձեր սերը:**  
Թեքս, երբ տեսա Ջոն Քասավետիի «Սովերները»: Երիտասարդ էի, ու ֆիլմն ինձ վրա ուժեղ տպավորություն թողեց: Ֆիլմ՝ մեզ նման մարդկանց ու իրական կյանքի մասին... Մինչ այդ՝ այնքան էլ հրապարակված չէին կինոյով: Երբ երեխա էի, ինձ դուր էին գալիս վեպերները և ուրիշ ոչինչ: Բայց «Սովերները» մինչև հիմա մնացել է իմ սրտում:

**Նիգերիայից հետո, երբ արդեն նկարահանել էիք ձեր առաջին ֆիլմը, վերադարձաք Ամերիկա: Ի՞նչ պատահեց հետո:**

Սկսեցի Կալիֆորնիայում դասավանդել 8-րդ դասարանցիներին և հանդիպեցի մի խումբ տղաների, ովքեր շատ բան գիտեին կինոյի մասին: Նրանք ինձ ներկայացրին կինոյի բոլոր տեսակները, օրինակ ֆրանսիական «նոր ալիքը»: Մենք ստեղծեցինք Սինե մանիֆեստը՝ ռեժիսորների ձայնարկային կոլեկտիվ, որն ուզում էր նկարել ֆիլմեր՝ աշխատավորների կյանքի մասին: Հենց այդտեղ է ծնվել «Հյուսիսային լույսերի» մտահղացումը: Նկարահանեցինք, թե ինչպես է ազարակատերերի փորձիկ մի լիգա պայքարում Հյուսիսային Դակոտայի ընկերությունների դեմ: Համառոտաբար Ջոն Հենսոնը և ես արմատներով Հյուսիսային Դակոտայից ենք: Բոլորիս համար էլ դա մեր առաջին լույս ֆիլմն էր:

**Որպես ռեժիսոր՝ դուք փոխվեցի՞ք «Ոսկե խցիկ» ստանալուց հետո:**

Թվում էր՝ իմ առջև բազմաթիվ հնարավորություններ էին բացվում: Բայց ես հետաքրքրված չէի կինոթիվներով: Երբ հովիվության մի գործակալ զանգահարեց ինձ, և ես նրան ասացի՝ ինչ եմ մտադիր նկարահանել, նրան այդ առաջարկը դուր չեկավ: Մինչ օրս էլ հաջողացնում եմ նկարահանել որոշ ֆիլմեր, բայց ինձ դուր չի գալիս կինո-ինդուստրիան: 80-ականներին Վուլֆի Գոլդբերգի հետ միասին աշխատում էի մի ֆիլմի նախագծի վրա, բայց սխալ պրոդյուսերի էի վստահել: Մենք պարզապես ի վիճակի չեղանք հայտնաբերել անհրաժեշտ գումարը: Այնպես որ, ես ու ընկերներս որոշեցինք՝ եթե չի ստացվում ֆիլմ նկարահանել ինդուստրիայի կանոններով, ուրեմն մեր իմացած ձևով կանենք՝ Սան Ֆրանցիսկոյում, որտեղ բոլորս ապրում էինք:

**Ի՞նչ է նշանակում Direct Action Cinema:**

Շատերը ֆիլմ նկարելուց առաջ նախ մտածում են, թե ով պետք է կատարի այս կամ այն դերը: Նրանք ընտրում են դերասաններին ու միայն դրանից հետո գտնում տեխնիկական մասնագետներին: Իսկ ես հակառակն եմ անում: Ես գտնում եմ մարդկանց, ուսումնասիրում նրանց, և մենք սկսում ենք վարժանքներ, որպեսզի տեսնենք այդ մարդիկ ինչի են ընդունակ: Ես սցենարով չեմ աշխատում: Ֆիլմ նկարահանելիս կարծես բացահայտում եմ այն, ինչ չգիտես, օգտագործում ես կիրքը, զգացմունքը, ներքին ձայնդ, մարդկանց բերում ես կատարյալի և գտնում սյուժեի գիծը միայն այն ժամանակ, երբ մոտաժում ես ժապավենը: Մենք երբեք նախապես փորձ չենք անում. ամբողջ անակնկալը հենց այն է, որ ոչինչ չիմանաս: Օպերատորը պետք է ջազ նվագողի նման լինի՝ նա պետք է շարժվի, որպեսզի գտնի ճիշտ պահը: Եվ եթե նա չի տես-

նում դա, ես նրա ձեռքից բռնում եմ ու ցույց տալիս: Եվ ոմանց դա այնքան էլ դուր չի գալիս (*ԼՇ-ԻՅ Օսթլ շ*):

**Նկարահանման այդ ձևը պետք է որ շատ խորթ լինի ոմանց համար:**

Մի արտադրական ընկերություն կար, որը մեր տեսանյութերը տեսնելուց հետո ասաց. «Անհեթեթություն է: Սա հնարավոր չէ մոնտաժել»: Բայց ինքներս մոնտաժեցինք նյութը և տվեցինք նրանց: Դա մի քիչ նման է վավերագրության ասես «Սովերները» cinéma vérité-ի ու small-combo jazz-ի խառնուրդ լինի: Դա այն երաժշտությունն է, որով ես մեծացել եմ: Ինձ հետաքրքիր չէ ուղիղ շարադրանքը կամ այն, որ իմ ֆիլմերը խճանկարի կամ նույնիսկ կուրիոզի նման են: Բարեբախտաբար մենք ունենք MTV, և այս օրերին մարդիկ շատ ավելի սովոր են նման արտասովոր ռիթմերի:

**Ձեր վերջին ֆիլմը՝ «Կամուրջ դեպի սահման», նույնպես նկարահանվել է այս մեթոդով:**

Այո: Մենք հավաքել էինք 21 մարդ՝ պրոֆեսիոնալ և ոչպրոֆեսիոնալ դերասանների: Քանի որ իմ աշխատանքը ենթադրում է նախ տեսնել մարդկանց, հետո նոր պատկերացնել ֆիլմը, ես տեսա նրանց ու մտածեցի Weather Underground-ի մասին: Այնպես որ, ֆիլմը դրա ժամանակակից տարբերակն է՝ մի խումբ մարդիկ միանում են, որպեսզի ահաբեկչություն կազմակերպեն:

**Դուք կարծես դեռ ապագայի ծրագրեր ունեք:**

Ես կուզեի լինել պորտուգալացի ռեժիսոր Մամուլի դե Օլիվեյրայի նման, ով նույնիսկ 106 տարեկանում ֆիլմեր էր նկարում: Այսուհետ՝ տարեկան մեկական ֆիլմ եմ նկարահանելու (*ԼՇ-ԻՅ Օսթլ շ*): Չէ, իրականում ես ուզում եմ ֆիլմեր ստեղծել այնքան ժամանակ, քանի դեռ կլինեն մարդիկ, ում հետ ուզում եմ աշխատել: Նպատակը նույնն է՝ հասկանալ, թե ինչի մասին է լինելու հաջորդ ֆիլմը: **ՄՆ**

**Ռոբ Նիլսոնը վարպետության դաս կանցկացնի այսօր՝ 15:00, Փոքր թատրոնում**

**American director Rob Nilsson (1939) is presenting the Yerevan Premiere of *A Bridge to a Border*, the latest in a long line of films created using his Direct Action Cinema approach. Nilsson took his first steps in cinema in Nigeria, where he was working for the US Peace Corps during the Vietnam War, creating *The Lesson* (1965), a short 8mm spoof of neo-colonialism. But his career really got started with *Northern Lights*, which won the Camera d'Or for best debut feature in Cannes in 1978. In the intervening decades, he has made 48 short and feature films – and there will be many more to come, the 75-year-old director says.**

**When did your love for cinema begin?**

Definitely after having seen John Cassavetes' *Shadows* as a young man. I was blown away! Cinema about people like us and about how life really is: astonishing! Up until that point, I had no use for cinema. As a child I liked westerns, but that was it. *Shadows* still resonates in my mind.

**After having made your first film, you returned to America. What happened there?**

